ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՆԻ
ՉԱՐՉՅԱՆ

Ծնվել է Երևանի նահանգի Սուրմալու գավառի Կողբ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է Երևանում: 1931թ. ավարտել է Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումը և աշխատանքային գործունեությունն սկսել Երևանի էլեկտրաձուլման գործարանում: Աշխատանքին զուգընթաց՝ սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիատեխնոլոգիական ֆակուլտետում (1934-1940): 1940թ. նշանակվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի տեղական արդյունաբերության բաժնի վարիչ, ապա՝ ՀԿԿ Երքաղկոմի արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ, ՀԿԿ Ստալինյան շրջկոմի 2-րդ քարտուղար:

1943թ. մայիսին ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նախագահ:

1944թ. մայիսից մինչև նոյեմբեր սովորել է Մոսկվայի բարձրագույն դիվանագիտական դպրոցում և գործուղվել ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմատ: Եղել է արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության նախագահի տեղակալ, ՀԿԿ կենտկոմի թեթև արդյունաբերության բաժնի, ապա՝ ծանր արդյունաբերության բաժնի վարիչի տեղակալ, ՀԿԿ կենտկոմի թեթև արդյունաբերության բաժնի վարիչ:

1951 թվականից ՀԿԿ Երևանի քաղկոմի 2-րդ քարտուղարն էր, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալը (1952-1953), ՀԽՍՀ ժողտնտխորհի նախագահի տեղակալը (1957-1959):

1959թ. նշանակվել է Մոսկվայում ԽՍՀՄ կառավարությանը կից ՀԽՍՀ ՆԽ մշտական ներկայացուցիչ:

Մահացել է 2001 թվականին: